

ԱՂԱՎՆԻ ՈՒԹՈՒՋՅԱՆ

## ՄԻ ՄՈՌԱՅՎԱԾ ԵՐԱՆՏԱՎՈՐ

(Նովհաննես Ավդալ)



ԺԸ. դարի վերջերին ևս ԺԹ. դարի սկզբներին հնդկահայ գաղթավայրում զգալի փոփոխություններ են տեղի ունենում ընդհանրապես մշակույթի և մասնավորապես լուսավորության, գրադարանային, դպրոցական կյանքի, լրագրության զարգացման բնագավառներում: Դա հետևանք էր ոչ միայն երոպական և առաջին հերթին անգլիական մշակութային ազդեցության, այլև հնդկահայերի կյանքում ազգային բուռն փոփոխությունների, ինքնագիտակցության աճի և հետևորդ հայրենիքի նկատմամբ մեծագույն հեղափոխության: Այս շրջանում է, որ սկզբնավորվում է հայ պարբերական մամուլը և պարսկական չէ, որ բնագավառում առաջին օրինակը փոխեց հնդկահայ ինտելեկտուալ միջավայրը [«Ազգաբար» (1794-1796), «Օճանաստիլունան»

(Բոմբեյ, Կալկաթա, 1815-1819), «Նայելի Կալկաթան» (Կալկաթա, 1820), «Շարեմաբան» (Կալկաթա, 1821-1823)] պարբերականները: Այսպիսով բացվում են երոպական փառի առաջին դպրոցները, թարգմանաբար լույս են տեսնում արևմտյան նշանավոր գրողների գրական ստեղծագործությունները, հրատարակվում են պարսկամշակութային ու ազգային արժեք ներկայացնող բազմաթիվ երկասիրություններ:

ԺԹ. դարի առաջին կեսի հնդկահայ այս միջավայրում է գործել նշանավոր մանկավարժ, թարգմանիչ, հոեպոթ, ազգային-հասարակական գործիչ, հայագետ Նովհաննես Ավդալը: Ցավոք, այս անունն այսօր արդեն մարմնակա է մոռացության: Ներկայումս այս հոգվածը հարգանքի մի համեստ փորձ է նրա անվան և գործի հիշատակին:

Նովհաննես Ավդալը ծնվել է 1803 թ. Իրանի Շիրազ քաղաքում<sup>1</sup>: Հանգամանքների բերումով նրանց ընտանիքը փոխադրվում է Նոդկաստանի Կալկաթա քաղաքը: Նա իր կրթությունը ստացել է Հարություն Գալուցյան Եղոկացու (1777-1833) մասնավոր դպրոցում, որը հիմնադրվել էր դեռևս 1798 թվականին<sup>2</sup>: Ուսումնառության ընթացքում

1 Տե՛ս A. Mirsaian, *The Church of Nasareth in Calcutta*, Calcutta, 1951, էջ 74:

2 Տե՛ս Զ. Գ. Նահանյան, Կալկաթայի Հայոց Մարդասիրական ճեմարանը (1821-1971), Թեհրան, 1971, էջ 26: Այս դպրոցի մասին մանրամասն տե՛ս Զ. Իրազկել (Յակոբ Տեր-Յակոբյան), Պարմություն հնդկահայ

1818 թ., ընդամենը 15 տարեկան հասակում, Մարգիս Մարգսյանի, Մկրտիչ Աղանուր-յանցի, Ղազար Աղաբեկյանի և այլոց հետ գործուն մասնակցություն է ունեցել «Իմաստ-պախտորեան միաբանութիւն» ընկերության հիմնադրմանը, որն իր առջև նպատակ էր դրել հնդկահայոց մեջ «տարածել ուսումնասիրություն, ընթերցանություն և բարեսիրություն»։ Ընկերության կանոնադրության մեջ հաստատվել է. «Անխնայ անձնա-պուր ջանիւք և անդուլ, անձանձիր աշխատասիրութեամբ զանձինս մեր ի գրականական և յուսումնական գործս պարապեցուցանել. և զբարիս, որք յայսցանէ օճանասիրական պարապմանց մերոց ունին յառաջ գալ, անխնայօրէն հաղորդել քմաց ընդ անուր սիրելի մերազնէից և տալ նոցա վայելել ի նոսին»<sup>3</sup>։ Ընկերությունը գործել է երկու տարի և փակվել 1820 թվականին։

Այդ ընթացքում Նովի. Ավդալը շարունակում է ուսումնառությունը Գալուցյանի մասնավոր դպրոցում, հմտանում գրաբարի և անգլերենի խմացության բնագավառներում, մեծ հետաքրքրությամբ է ընթերցում ազգային մատենագիրների (Մովսես Խորենացի, Եղիշե, Ագաթանգեղոս...) երկասիրությունները։ Ուսումնառությանը զուգընթաց Գալուցյանի առաջարկով դպրոցում միաժամանակ վարել է ուսուցչական պաշտոն։

1821 թ. ապրիլի 2-ին Կալկաթայում ազգային բարերարներ Ասրվաձապուր Մուրադյան Զուդայեցու և Մնացական Վարդանյան Զուդայեցու մեծագումար կտրակով իր դուռն է բացում անցյալի լավագույն հայկական ուսումնական հաստատություններից մեկը՝ Մարդասիրական ճեմարանը<sup>4</sup>։ Ավելի քան քառորդ դար բեղմնավոր գործունեություն ծավալած Գալուցյանի մասնավոր դպրոցը միավորվում է Մարդասիրական ճեմարանի հետ, իսկ ինքը՝ Գալուցյանը դառնում է ուսումնական այդ հաստատության «գլխավոր վարժապետ» (ռեկտոր)։

Ճեմարանը նոր տիպի դպրոց էր՝ նոր ծրագրերով, նոր առարկաներով ու նպատակներով։ Ճեմարանը ղեկավարել է «Կառավարիչների ժողովը» (Նոգաբարձուների խորհուրդ), որն էլ, ուսումնական աշխատանքները կազմակերպելու համար ընտրել է ռեկտորին («գլխավոր վարժապետ»)։ Ճեմարանի կանոնադրության համաձայն՝ «գլխավոր վարժապետը» պարտադիր պետք է լիներ աշխարհական «ազգաւ հայ և դաւանութեամբ հաւաքաբիւմ վարդապետութեանց Սուրբ Եկեղեցոյ Նայաստանեայց»<sup>5</sup>։ Ուսումնական ծրագրերում գերակշռողը եղել է լեզուների ուսումնառությունը՝ գրաբար, անգլերեն, հուներեն, պարսկերեն, հնդկերեն։ Դասավանդվել է նաև բնագիտություն, աշխարհագրություն, մաթեմատիկա, աստղաբաշխություն, հայոց պատմություն և այլն։

Ն. Գալուցյանը 1825 թ. ճեմարանում հայոց լեզու դասավանդելու համար հրավիրում

տպագրության, Բեյրութ, 1986, էջ 39-41։

3 «Նայիական հին լրագրութեան էջ մը», տե՛ս «Բազմավեպ», 1907, թ. 1-2։

4 Տե՛ս H. M. Nadjarian and M. D. Arathoon, *Armenian College old boys' Union Souvenir, Colden jubilee 1909-1959*, Calcutta, 1965 (Ճեմարանի նախկին սաների միության ոսկյա հոբելյանը, Կալկաթա, 1965)։

5 Մանրամասնությունները տե՛ս Ջ. Մ. Միրզաբեկյան, Ավետարկներ հնդկահայ գրականության և մշակույթի պատմության (1770-1850), Երևան, 2000, էջ 120-121։

6 «Կարգադրութիւնք Մարդասիրական ճեմարանին Նայոց, որ ի Կալկաթա», տե՛ս «Արշալոյս Արարարեան», օրաթերթ, Զմիւռնիա, 1844, թ. 208։

Է իր նախկին սանին՝ Նովի. Ավդալին, որի հեղափոխական գործունեությունը կապվում է Մարդասիրականի անվան հետ: Նովի. Ավդալի կյանքում Ն. Գալուցյանը առանձնակի դեր է խաղացել: Նրա ազդեցությամբ է, որ նվիրվել է մանկավարժությանը և իր կյանքի իմաստը տեսել ճամարանի հեղափոխական բարգավաճման մեջ: Պարսկական չէ, որ Ավդալը ի հիշարարկ Գալուցյանի իր որդիներից մեկին անվանել է Նարություն<sup>7</sup>, «արդիւնաշար վարժապետին» ձոնել հապուկ ներքոյան-ոսրանավոր<sup>8</sup>: Ավդալի կենսագրության այս շրջանի նշանակալից իրադարձություններից պետք է համարել այն, որ 1826 թ. ընդգրկեց Բենգալիայի Ասիական գիտական ընկերության իսկական անդամ, առաջինը հայերի մեջ: 1828 թ. ապրիլի 7-ին Կալկաթայում նրա ջանքերով կազմակերպվեց «Արարատյան գրադարան» ընկերությունը, որը ոչ միայն գրքեր հավաքելու, այլև դրանք ազգայինների շրջանում տարածելու, նրանց հայ գրքին ու գրականությանը կապելու խնդիր է ունեցել<sup>9</sup>: Գրադարանում հայերեն ձեռագիր և տպագիր գրականությունից բացի եղել է անգլերեն, լատիներեն, ֆրանսերեն և այլ օտար լեզուներով գրականություն<sup>10</sup>: 1833 թ., երբ մահացավ Ն. Գալուցյանը, ճամարանի «Կառավարիչների ժողովը» գլխավոր վարժապետ նշանակեց 30-ամյա Նովի. Ավդալին: Ընդամենը 30 տարի՝ մինչև 1863 թվականը, նա մեծ պարասխանավորությամբ ու սիրով վարեց այդ պաշտոնը: Նրա տեսչության շրջանը համարվում է ճամարանի գործունեության բարձրակետը: Նրա հոգացողությամբ է, որ ուսումնական հաստատությունը օժտվեց սեփական տպարանով ու գրադարանով<sup>11</sup>: Նովի. Ավդալը ճամարան մարմնացրեց ուսումնական նոր առարկաներ՝ հայոց լեզվի քերականություն, հայոց պատմություն, ճարտասանություն, տրամաբանություն: Գնահատելով դասագրքերով ապահովելու միջոցառությամբ նրա ջանքերով դեռևս 1830 թ. Կալկաթայում վերահրապարակվեց Մ. Չամչյանի «Քերականություն Հայկազեան լեզուի» ձեռնարկը<sup>12</sup>: Նավելումներով և լրացումներով հանդերձ երկիցս վերահրապարակել է (1841, 1845) Մարտիրոս Դավթյանցի «Վիկտորիա» վերաբերությամբ Այբբենարանը, որտեղ գերեզման է նաև իր բանաստեղծություններից մի բանիսը<sup>13</sup>:

Նովի. Ավդալը նախանձախնդիր է եղել նաև հայ օրիորդների կրթությանը: Գնահատելով հիմնադրել է «Օրիորդաց դասարան»՝ ուսուցչական հապուկ կազմով: Յավոք, նյութական միջոցների բացակայության պարագայում 1842 թ. այդ դասարանը փակվեց: Բայց դա չփակեցրեց անխնայ մանկավարժին: Նա իր բնակարանում օրիորդների հա-

7 Տե՛ս Mesrobian Seth, *Armenians in India*, Calcutta, 1937, էջ 481:

8 Տե՛ս «Ներքոյան յօրինեալ յիշարարկ բարեպաշտին Գալուցեան պարոն Յարութիւնին» երեսն և հինգամեայ արդիւնաշար վարժապետին», Կալկաթա, 1834, 16 էջ: Ուրանավորի սկզբնապատերը հեղում են՝ «Ի Յովհաննիսէ Ավդալեանց առ վարժապետ իւր Յարութիւն Գալուցեան»:

9 Տե՛ս Mesrobian Seth, *Armenians in India*, էջ 512:

10 Տե՛ս Ջ. Մ. Միրզաբեկյան, նշվ. աշխ., էջ 125:

11 Տե՛ս Ն. Աճառյան, Հայ գաղթականության պատմություն, Երևան, 2002, էջ 308:

12 Մա Մ. Չամչյանի Քերականության (Վենետիկ, 1779) համառոտագրությունն է (տե՛ս «Չամչեանի հօրն Միրզայի» Քերականություն Հայկազեան լեզուի»): Համառոտագրեց պարոն Յովհաննէս Ավդալեանց՝ անդամ Ասիական միաբանությանն Բենգալայ և դասատուց ի Մարդասիրական ճամարանին, Կալկաթա, 1830:

13 «Վիկտորիա»-ում տեղադրված Ավդալի «31 դեկտեմբերի 1828 ամի» բանաստեղծությունը Մ. Բմինը գերեզման է իր հրապարակած «Ընդիր հապուածք քաղեալի ի գրոց նախնի և արդի մարենագրաց Հայոց» ժողովածուում (Մոսկվա, 1849, էջ 207):

մար կազմակերպում է հարուկ դասարան, որն, ի հարգանս իր երբեմնի ուսուցչի անվանում է «Երկրորդ Գալուցյան դպրոց», և, որն «ընդ անգղիացի գիտնական վարժապետուհով՝ կարէր և կարէ լնույ զբովանդակ ակնկալութիւն և փափագ ազգին, եթէ ազգասիրաբար ձեռնարկութիւն լինէր»<sup>14</sup>: Դժբախտաբար, այդ օժանդակությունը այդպես էլ չստացվեց, և շար չանցած Ավդալի մասնավոր դպրոցը սրիպողաբար փակվեց<sup>15</sup>:

Նովի. Ավդալը կարևոր դերակատարություն է ունեցել հնդկահայ երիտասարդության հայեցի և ազգային ավանդույթներով ու ազգային հպարտությամբ փռված մի ամբողջ սերնդի դաստիարակության գործում: Նրան («առն համեստաբար», «ներհուն վարժապետ»-ին)<sup>16</sup> են աշակերտել հայ մշակույթի ու հասարակական կյանքի շար նշանավոր գործիչներ, ինչպես օրինակ՝ ակնավոր հայագետ Մկրտիչ Էմինը, վիպասան, պարմագիր Նարություն Տեր-Նովհաննիսյանը, թարգմանիչ Թադևոս Խաչիկ Ավետուհյանը, գրագետ, մանկավարժ Խաչիկ Աբրահամ Թովմասյանը, մանկավարժ Մկրտիչ Աղաբեգյանը, Թոմաս Մալքումը և շար ուրիշներ<sup>17</sup>: Պարկատելի վաստակ, որի լավագույն գնահատականը տվել է ինքը՝ Ավդալը, 1858 թ. ճեմարանի մանկավարժների և շրջանավարտների ժողովում արտասանած ճառում: Ներկայացնելով իր երկարամյա մանկավարժական գործունեությունը Մարդասիրականում՝ «ուր ծաղկափթիթ գարուն կենացս փոխեցաւ ի քրեւոթափ ամանակ աշխատանոյ», նա մեկառմէկ թվարկում է ճեմարանի ձեռքբերումներն ու հաջողությունները երիտասարդ սերնդի հայեցի դաստիարակության բնագավառում, որը նա համարում էր իր կյանքի մեծագույն նվաճումը:

1850-ական թվականների վերջերին ճեմարանը հայտնվեց նյութական ծանր պայմաններում: Ֆինանսական միջոցներն արդեն անբավարար էին ծախսաբար հասարակությունը բարվոք վիճակում պահելու համար: Շար ծնողներ իրենց երեխաներին հանում են ճեմարանից և ուղարկում հարեւան անգլիական դպրոցները: Արձանագրված է, որ 1858 թ. ճեմարանն ուներ ընդամենը 5 աշակերտ և երեք ուսուցիչ<sup>18</sup>: Ճեմարանի նման անփառունակ վիճակի պարասխանաբուն՝ Ավդալը, նկատում է հայ ծնողների անգուսպ անգլիամոլությունը՝ «Վասն գի սէր հայկական գրագիտութեան նուագելով նուագեցաւ ի միջի մերում յայսմ քաղաքի. վասն գի սկսան անպիտան, անշահ և ումպէր համարել գգիտութիւն լեզուին հայոց. վասն գի ասացին՝ քահանայ և վարդապետ ոչ ունին դառնալ մանկունք մեր: Անգղիական լեզուն գեր ի վերոյ ամբարձեալ: Անգղիականն լոկ պիտանի, շահաւէր և հարկատր երեւեալ: Անգղիականն միայն գիաց և զապրոսսը հայթայթեալ: Անգղիագարութիւնն իբրև մղձաւանջ քիբեալ է ի վերայ սրտից ամենեցուն: Անգղիագարութիւնն իսպառ ցամաքեցուցեալ է զաղբիւրս սիրոյ մայրենի լեզուագիտութեան և հայկական գրագիտութեան: Անգղիագարութիւնն գրեթէ դարարկացոյց, իջոյց զայն մինչ ցլեպին անշքութիւն»: «Նայ երեխաները, դառնացած եզրակացնում է նա, - բայց մինչև

14 Տե՛ս «Ազգասէր», 1847, հար. Դ, թ. 74, էջ 10:

15 Տե՛ս Զ. Գ. Նանանյան, նշվ. աշխ., էջ 57:

16 Տե՛ս Մեսրոպ Թադիսեան, Ուղեգրություններ, հոդվածներ, նամակներ, վավերագրեր, աշխատասիրությամբ՝ Ռ. Նանունյանի, Երևան, 1975, էջ 502, 518:

17 Տե՛ս Mesrobian Seth, *Armenians in India*, էջ 489:

18 Մանրամասն տե՛ս Զ. Գ. Նանանյան, նշվ. աշխ., էջ 32-33:

սիրեն և պարտեն գԱնգղիերէնն, ոչ պարսիս արել և անարգել գհայերէնն»<sup>19</sup>: Նա վճռականորեն մերժում է ճեմարանի կառավարիչների 1858 թ. հուլիսի 12-ին գումարված ժողովի առաջարկը կենսաթոշակի անցնելու վերաբերյալ և խնդրում հնարավորություն տալ «աշխատել և ծառայել պարտուղի ազգին իմոյ գթանի մի ամս ևս»<sup>20</sup>: Կառավարիչների որոշմամբ Նովի. Ավդալը շարունակում է ճեմարանում պաշտոնավարել ևս հինգ տարի՝ մինչև 1863 թվականը, որից հետո արդեն որպես «պարտույ հոնկտոր»՝ մինչև 1865 թվականը: Թոշակի անցնելը փոխի է տալիս հոգեկան ծանր փոփոխությունների, և շատ ջանքով՝ 1870 թ. հուլիսի 11-ին 67 փարեկան հասակում նա մահանում է<sup>21</sup>: Նովի. Ավդալին հուղարկավորեցին իր սիրելի աշակերտները՝ Կալկաթայի Ս. Նազարեթ եկեղեցուն հարակից հայկական գերեզմանոցում:

Նովի. Ավդալը մանկավարժական անողով գործունեությունը զուգորդել է գրական-թարգմանական աշխատանքներով: Լինելով մանկավարժ, ուսումնական գործի կազմակերպիչ, բնականաբար, նրան նախ և առաջ հետաքրքրել են դասփարակչական, մանկավարժական խնդիրները, և պարսիսական չէ, որ նրա երկասիրությունները՝ ինքնուրույն, թե թարգմանական, հիմնականում նվիրված են այդ բնագավառներին: Որպես կանոն դրանք ճոռոմ գրաբարով և վերամբարձ ոճով գրված, փոքրածավալ գործեր են, որ այսօր գեղարվեստական որևէ հետաքրքրություն չեն ներկայացնում: Այդ երկերը պետք է արժևորել ԺԹ. դարի առաջին կեսի հնդկահայ մշակութային միջավայրում փրկապետ գրական ճաշակի պահանջմունքներից ելնելով: Դրանց առաջնեկը «Մշտիկ» վերաբանությամբ Մարդասիրական ճեմարանի աշակերտության համար գրված ուսումնական ձեռնարկն է<sup>22</sup>: Դարձյալ «ի պէրս մանկաց մարդասիրական ճեմարանին» մտահոգությամբ նա հեղինակել է թրիստոնական վարդապետությանը նվիրված մի համառոտ ուղեցույց<sup>23</sup> և նմանաբնույթ կրոնաբարոյական բնույթի այլ աշխատանքներ<sup>24</sup>:

Ճեմարանում անգլերենի դրվածքն ուժեղացնելու և սաների շրջանում պարսիսա-նարվությունը բարձրացնելու նպատակով ձեռնամուխ է եղել Նարություն Ավգերյանի և Ջոն Պրենտոնի անգլերեն-հայերեն բառարանի<sup>25</sup> համառոտագրությանը<sup>26</sup>: Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի միաբան Գրիգոր Վարդապետի նյութական ու բարոյական աջակցությամբ վերահրապարակել է դեռևս 1799 թ. Կ. Պոլսում լույս տեսած ԺԳ. դարի մարենագիր Նովիաննես Արճիշեցու՝ Ս. Պարարագի խորհրդի մեկնությունը՝ մանրակրկիտ սրբագրությամբ<sup>27</sup>:

19 «Ճառ գոր ասաց վարժապետ պարոն Յովհաննես Ավդալեան ի ժողովի անդամոց Նայկեան մարդասիրական ճեմարանին որ ի Կալկաթա», Վենետիկ, 1858, էջ 31-33:

20 Անդ, էջ 38:

21 Տե՛ս Mesrobian Seth, *Armenians in India*, էջ 449:

22 «Մշտիկ, որ է բանասիրություն իմն՝ յօրինեալ պարոն Յովհաննեսի Ադալեանց», Կալկաթա, 1823:

23 «Թրիստոնական կրթությունը», Կալկաթա, 1841:

24 Նովի. Ավդալի գրական ժառանգության մանրամասն նկարագիրը տե՛ս Իրազեկ, նշվ. աշխ., էջ 221-222, 254, 259-262, 264, 267-269, 274-275, 316 և այլն:

25 «A Dictionary English and Armenian», Վենետիկ, 1821, 23+981+2 էջ:

26 «Auchers Dictionary, English and Armenian», Abridgen by Johannes Avdall, Կալկաթա, 29+290 էջ:

27 Յովհաննես Արճիշեցի, Մեկնություն ահատր խորհրդոյ Սրբոյ Պարարագին: Արարանեալ ի մեկնութեանց Խոսրովու Անձեանցեաց եպիսկոպոսի և Ներսէսի Լամբրոնացոյ՝ վերադեսչին Տարսոնի, Կալկաթա, 1830:

Արդյունաշար է նաև Նովի. Ավդալյանի թարգմանական գործունեությունը: Թարգմանությունները, որ նա կատարել է ֆրանսերենից և անգլերենից, հիմնականում հեղափոխական և բարոյախոսական նպատակներ: Այս խմբում հայտնաբերվել է անգլիացի 25 գրողների՝ «Անգլիաց անպէր» խորագրով 94 սրբազանությունների ժողովածուն՝ այդ նույն գրողների համառոտ կենսագրականներով<sup>28</sup>: Ժողովածուում գերակշռում են սրբազանությունների խորագրերի միայն թուցիկ թվերով կարող է գաղափար փայլ դրա բովանդակության և քրիստոնեական բարոյագիտական ուղղվածության վերաբերյալ. Զոնտոն՝ «Ունայնություն հարստության», Էդիտոն՝ «Յաղագս երախտագիտության», Ռազի՝ «Մէր և պարի արժան է յաշակերտաց առ ուսուցիչս իրենց», Նարիս՝ «Առաքինություն և բարեպաշտություն են մեծագոյն օգուտ մարդոյ» և այլն:

Նման նպատակ են հեղափոխում նաև ֆրանսիացի նշանավոր գրող Ռենե Շապոր-բիանի «Արալա» վիպակի<sup>29</sup>, անգլիացի գրող Սամուել Զոնտոնի «Նոաստեղա» չափածո սրբազանությունների<sup>30</sup>, ինչպես նաև «Քրիստոսոստոյց» աստվածաբանական փրակարարի<sup>31</sup> թարգմանությունները:

Նովի. Ավդալյանի գրական ժառանգության գլուխգործոցը Միքայել Չամչյանի «Խրախճան պարմութեան Նայոց» երկասիրության անգլերեն թարգմանությունն է: Ժամանակին Ավդալյան ջանքերով է, որ դեռևս Ն. Գալուցյանի փեսայության շրջանում ճանաչանի դասագրքում հասարակարար ու պարզավոր փոքր գրքով Նայոց պարմություն առարկան: Սակայն մարտիրոսության փոքր էր փախ համապարասիան դասագիրք-ձեռնարկի բացակայությունը: Խնդիրը կարող էր լուծել այդ ժամանակ շրջանառության մեջ գտնվող հայոց պարմության միակ ձեռնարկը որպես դասագիրք ճանաչան մարմնավոր իրողությունը: Խոսքը նշանավոր պարմագիր Միքայել Չամչյանի եռասարկ (ավելի քան 3000 էջ) «Նայոց պարմութեան»<sup>32</sup> հիմքի վրա, իր իսկ Չամչյանի համառոտած «Խրախճանի» մասին էր<sup>33</sup>: 1824 թ. վարչության որոշմամբ այն անփոփոխ վերահրատարակվում է<sup>34</sup> և որպես դասագիրք մարմնավոր ճանաչան: Սա մի մաքուր, պարզ և խոշորարկ հրատարակություն էր, որը սիրով ընդունվեց ոչ միայն սաների կողմից: Առարկայի նկատմամբ հեղափոխությունը գնալով աճում էր, այն մեծ կարևորություն էր ձեռք բե-

28 «Անգլիաց անպէր»: Յոթում պարագրին քաղուածք պէտպէս գեղեցկապաճոյն իրարական և հոգեգործարճ բանից ի գանազան երեւելի անգլիացի մարեւագրաց, գլխաւորաբար դիւրեալ ի հրահանգութիւն և ի գրօսանս համբակաց», Կալկաթա, 1821:

29 Ռ. Շապորբիան, Արալա. օրիորդն սիրագոհ. Որ է սրբառու պարմութիւն, Կալկաթա, 1826:

30 Սամուէլ Զոնտոն, Նոաստեղա, արքայորդին Եթովպիոյ: Որ է բանաստեղծական պարմութիւն իմն բարոյական, Կալկաթա, 1826:

31 «A Summary of the principal evidences for the truth and divine origin of the Christian revelation». (Բ. փիլոսոփայութիւն՝ «Քրիստոսոստոյց, յորում պարմունակի բովանդակութիւն գլխաւոր վկայութեանց ճշմարտութեան և երկնային ծագման յայտնութեան քրիստոնէութեան», Կալկաթա, 1828): Տիպոգրաֆերթն է միայն անգլերեն, բնագիրը հայերեն է:

32 «Պարմութիւն Նայոց ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ փեսոն 1784: Յօրինեալ ի Նայր Միքայէլ վարդապետ: Չամչեանց Կոստանդինոպոլսեցոյ», հայր. Ա.Գ., Վենետիկ 1784-1786:

33 «Խրախճան պարմութեան Նայոց: Յօրինեալ ի Նայր Միքայէլ վարդապետ: Չամչեանց», Վենետիկ, 1811, 488 էջ:

34 «Խրախճան պարմութեան Նայոց: Յօրինեալ ի Նայր Միքայէլ վարդապետ: Չամչեանց և փապագրեալ ի Վենետիկ: Վերադրին փապագրեացալ՝ ի պէրս Մարդասիրական ճանաչանին», Կալկաթա, 1824, է+587 էջ:

րում նաև ծնողների շրջանում և ընդհանրապես հնդկահայ հերիածայնության կյանքում: Նանգամանք, որ աստիճանաբար նկատվելի էր դառնում և կարևորվում նաև օտար՝ անգլիական միջավայրում: Այդ ժամանակ է, որ Բենգալիայի Ասիական ընկերության Ավդալի պաշտոնակիցներից շարերը և ընդհանրապես անգլիացի մրավորականները բռն են արաքրքրություն են ցուցաբերում հայոց պարմական անցյալի նկատմամբ:

Գիտակցելով հայոց պարմությունը օտարալեզու ընթերցողներին ներկայացնելու և այդ միջոցով նրանց հերաքրքրությունը հայերի ներկա դժբախտ կացության վրա հրավիրելու հրամայականը՝ Ավդալը որոշում է Խրախճանը թարգմանել անգլերեն: Բենգալիայի Ասիական ընկերության 1826 թ. հոկտեմբերի 4-ին կայացած նիստի ժամանակ արտասանած ելույթում Ավդալը համեստորեն խոստովանում է, որ ինքը հիմնադրի գիտակցում է, որ «անգլերեն լեզվի իր իմացությունը չի կարող անթերի լինել», հետևաբար երախտագիտությամբ է հիշարակում Կալկաթայի եպիսկոպոսական կոլեջի պրոֆեսորներ Զարդ Նաթինսի և Զորջ Նոկինսի անունները, որոնց «քարյացկամ աջակցությամբ» հնարավոր եղավ թարգմանության դժվարին գործը իրականացնել: Իմաստալիտական ընկերության իր մտերիմներից, հրապարակախոս, գրող Մարտիրոս Մկրտիչ Դավթյանը ոչ միայն խրախուսել, այլև աջակցել է գործընթացին:

Ի վերջո, թարգմանական դժվարին աշխատանքը պսակվեց հաջողությամբ: 1827 թ. Բենգալիայի եպիսկոպոսական կոլեջի հրապարակչությունը լույս ընծայեց Խրախճանի անգլերեն թարգմանության գույգ հատորները<sup>35</sup>: Անգլերեն թարգմանության առաջին և կարևորագույն փաթեթությունը հայերեն բնագրից դրա երկհատոր լինելն է: Նրա արականությունն իրականացվել էր դրա՝ դասագիրք ծառայեցնելու գիտակցությամբ. փառերը խոշոր էին, փողերը՝ ազատ, լայն:

Առաջին հատորն ընդգրկում է Աշխարհաստեղծումից մինչև -Ք. հ. 855 թվականը՝ մինչև Աշուր Բագրատունու Նայասարանի կառավարիչ նշանակվելու իրողությունը (414 էջ): Երկրորդ հատորը՝ Բագրատունյաց թագավորության հռչակումից մինչև 1780 թվականը (504 էջ):

Վերջին իրադարձությունը, որ հիշարակում է Միքայել Չամչյանը, Ղուկաս Ա. Կարնեցու գահակալության ակտն է (1780): Այս իրողությունը շեշտելուց հետո պարմագիրը հավելում է. «Այլ թե յառուս սորա (Ղուկասի - Ա. Ու.) և յորս գելնի գելնի գինչ անցք անցին ի մեջ Նայոց՝ **այլոց թողաք գրել**»<sup>36</sup>: Կարծես թե հիմք ընդունելով այս ցուցումը՝ Ավդալը որոշում է ինքնուրույնաբար շարունակել Խրախճանը և այն համալրում է ևս 47 փարի ընդգրկող (1780-1827) չորս նոր գլուխներով: Սրանցում նա վեր է հանում Ղուկաս Ա. Կարնեցի (1780-1799) և Եփրեմ Ա. Ջորագեղցի (1809-1830) կաթողիկոսների գահակալության շրջանում փեղի ունեցած իրադարձությունները՝ մասնավորապես Դավիթ-դանիելյան կռիվների, Անդրեովկասում ռուսների առաջխաղացման և ռուս-պարսկական ռազմական ընդհարումների մանրամասները: Առանձնահատուկ ուշադրություն է դարձնում նաև Նոր Զոդայի հայկական գաղթավայրերի եկեղեցական-ազգային կյանքի պարագաներին: Այսպիսով, պետք է վերականգնել Ավդալի մոռացված

35 «History of Armenia by Father Michael Chamich: from B. C. 2247 to the year of Christ 1780». Translated from the original Armenian, by Johannes Avdal, in two volumes, v. I-II, Calcutta, 1827.

36 Մ. Չամչյան, Խրախճան պարմութեան Նայոց, էջ 479 (ընդգծումը մերն է - Ա. Ու.):

հեղինակությունը որպես մի որոշակի ժամանակաշրջանի՝ 1780-1827 թթ. պարամության հեղինակի, ինչպես ավելի ուշ Ավերիս Պերպերյանի դեպքում, որն ինքնուրույնաբար եւ առանձին գրքով շարունակեց Մ. Չամչյանի «Պարամությունը»՝ սկսելով 1772-ից մինչև 1860 թվականը<sup>37</sup>:

Անշուշտ, Նովի. Ավդալը «Խրախճանի» անգլերեն թարգմանությունը սաստիկ կարևորում էր աշխարհում ցրված հայությանը, հատկապես երիտասարդությանը ազգային ինքնագիտակցության ու հպարտության ոգով դաստիարակելու բնագավառում: Բայց կար մի չափազանց կարևոր հանգամանք, որ նա անհրաժեշտ է համարում շեշտել աշխարհային ընդարձակ առաջաբանում (էջ XIII-XLI) եւ կողմորոշել ընթերցողներին: «Միքայել Չամչյանը,- գրում է նա,- թեև ծնողյամբ հայ է, սակայն Նոմնական Կաթոլիկ Եկեղեցու հետևորդ: Ճիշտ է, նա իր Պարամության առաջաբանում խոստովանում է լինել անկողմնակալ, անաչառ եւ շարադրել միմիայն ճշմարիտը, այնուհանդերձ, Նայոց պարամության այն հատվածները, որոնք այս կամ այն կերպ առնչվում են Էկումենիկ խնդիրներին, նա զանց է առնում խոսքումը եւ իր դավանանքին հատուկ կողմնապահությամբ ու միտմամբ փորձում մոլորեցնել միամիտներին, դուրսահավասարներին, հարցին անտեղյակ ընթերցողներին»<sup>38</sup>: Ավդալը մի քանի վառ փաստերով ցույց է տալիս, որ հեղինակն ամենաչնչին առիթն իսկ օգտագործում է ջատագովելու Կաթոլիկ Եկեղեցին եւ նրա կողմնակից (իրական թե թվացյալ) հայ հոգևորականներին (որ մասնավորապես նկատելի է 451 թ. իրադարձություններից հետո), եւ ընդհակառակը՝ մեղադրում Նայ Առաքելական Եկեղեցու բոլոր այն գործիչներին, որոնք չեն ընդունել Նոմնական Եկեղեցու որդեգրած դավանաբանական սկզբունքները: Ներկաբար, եզրակացնում է Ավդալը, դավանաբանական հարցերում Մ. Չամչյանը այնքան էլ անկողմնակալ չէ, եւ ամբողջ գիրքը պետք է ընկալել այս լույսի ներքո: Անկախ նման ոչ ցանկալի փաստերից, թարգմանչի հետևությունը միանշանակ է, որ այս գրքի հրապարակությունը նպաստավոր դեր կխաղա բազում հայ եւ օտար պարամասներին, աստվածաբանների, գրողների եւ ընդհանրապես բոլոր հետազոտողների համար, որոնք անհրաժեշտ է հստակ պնդելություններ կատարան երբեմնի փառապանծ ու երջանիկ երկրի մասին, որոնք եւ կօգտագործեն իրենց համապատասխան ուսումնասիրություններում: Թարգմանիչը հավաքացած է, որ «Ներկա թարգմանությունը ամենապարբեր դավանանքի տեր քրիստոնյաների շրջանում համակրանք կառաջացնի այս ճնշված երկրի եւ նահապտակ ժողովրդի հանդեպ, իսկ հալածված ու տարագիր հայության սրտերում էլ կբորբոքի հայրենասիրական զգացումներ, եւ նրանք իրենց ամբողջ եռանդը կներդնեն վերականգնողական գործի համար այնքան պաշտելի Մայր Նայաստանը»<sup>39</sup>:

Նովի. Ավդալի այս հայեցակետը այսօր եւս շարունակում է մնալ այժմեական, որով էլ, անշուշտ, պետք է բացատրել Խրախճանի անգլերեն թարգմանության երկրորդ<sup>40</sup> եւ երրորդ հրապարակությունները<sup>41</sup>:

37 **Անդրիս Պերպերյան**, Պարամություն Նայոց, Կոստանդնուպոլիս, 1871:

38 **Michael Chamich**, *History of Armenia*, Preface, p. XXII.

39 Անդ, էջ XLI:

40 Մեսրոպ Մեթի արժեքավոր վկայության համաձայն Կալկաթայում սակավաթիվ օրինակներով այն վերահրապարակվել է 1930 թվականին (տե՛ս **M. Set**, էջ 512):

41 N. Y., 1990. Սա 1827թ. հրապարակության նույնական վերապրությունն է բարձրորակ պոլիգրաֆիկ